Հաստատվել է Ռեսանողական խորհրդի ընդլայնված
նիստում 2015 թվականի ապրիլի 29-ի նիստում
ՈՒԽ նախագահ՝ Դ. Մինասյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հյուսիսային համալսարանի (այսուհետ՝ համալսարան) Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ՈՒԽ) ուսանողական ներկայացուցչական, ապաքաղաքական ինքնուրույն, ինքնակառավարվող մարմին է:

1.2. ՈՒԽ-ն պաշտպանում է սովորողների իրավունքներն ու օրինական շահերը երկու ձևերով՝

ա/ գործով եզրակացություն տալու (կարծիք արտահայտելու)

բ/ որպես կողմ (ներկայացուցիչ) հանդես գալու:

1.3 ՈՒԽ-ն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Սահմանադրության, միջազգային իրավական փաստաթղթերի, ՀՀ իրավական ակտերի (ՀՀ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր (այսուհետ՝ ՀՀ օրենսդրություն)) համալսարանի նորմատիվ բնույթի փաստաթղթերի և սույն կանոնադրության պահանջների համապատասխան:

1.4. ՈՒԽ-ն կարող է ունենալ իր անվամբ դրոշմ, պաշտոնաթուղթ:

1.5 ՈՒԽ-ի լրիվ անվանումն է.

ա/ հայերեն՝ Հյուսիսային Համալսարաանի Ուսանողական Խորհուրդ

բ/ ռուսերեն՝ Студентчески Совет Севернего Унивеситета

գ/ անգլերեն՝ Student's Council of the North University

1.6 ՈՒԽ-ի կրճատ անվանումն է.

ա/ հայերեն՝ Հյուսիսային համալսարանի ՈՒսխորհուրդ

բ/ ռուսերեն՝ Студсовет Северного университета

գ/ անգլերեն՝ Studcouncil of the North University

1.7 ՈՒԽ-ի հասցեն է՝ ՀՀ, քաղաք Երևան, Ալեք Մանուկյան 15ա, Հյուսիսային համալսարան:

1.8 ՈՒԽ-ում գործունեությունն իրականացվում է անվճարելիության (հասարակական հիմունքներով) սկզբունքով:

1.9ՈՒԽ-ն կարող է իրականացնել հրատարակչական գործունեություն:

1.10 ՈՒԽ-ի անդամ կարող են լինել միայն համալսարանի սովորողները և (անկախ կրթության ձևից և կրթական ծրագրից):

1.11 Սովորողը կարող է լինել միայն ՈՒԽ-ը մեկ կառավարման մարնի, (հանձնաժողովի, ստորաբաժանման, բաժնի, օղակի) անդամ, բացառությամբ ժամանակավոր հանձնաժողովի:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 ՈՒԽ-ի նպատակներն են՝

2.1.1Նպաստել համալսարանի սովորողների իրավունքների և օրինական շահերի իրականացմանն ու պաշտպանությանը.

2.1.2 նպաստել համալսարանում ուսանողակենտրոն կրթության կազմակերպմանը.

2.1.3 նպաստել համալսարանի սովորողների կրթական, ստեղծագործական, ֆիզիկական, հայրենասիրական, բարոյական և հոգևոր զարգացմանը.

2.1.4 նպաստել սովորողների համար բարենպաստ ուսանողական միջավայրի ձևավորմանը.

2.1.5 աջակցել սովորողների սոցիալական վիճակի բարելավմանը.

2.1.6 կազմակերպել սովորողների ազատ ժամանցն ու հանգիստը:

2.2 ՈՒԽ-ի խնդիրներն են՝

2.2.1 ապահովել սովորողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը.

2.2.2 միավորել համալսարանի ուսանողական կազմակերպությունների և միությունների ջանքերը, որոնք կնպաստեն սովորողների համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, կխթանեն սովորողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը և կնպաստեն սվորողների մեջ համամարդկային արժեքների նկատմամբ հարգանքի սերմանմանը.

2.2.3 խթանել համալսարանի սովորողների ընդգրկումը ինչպես գիտակրթական,մշակութային, սոցիալական և այլ բնագավառներում, այնպես էլ՝ բուհի կառավարմնը մասնակցելուն:

3.ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1 ՈՒԽ-ն իր գործողություններն իրականացնելիս ղեկավարվում է հետևյալ սկզբունքներով՝

ա/ օրինականության.

բ/ օրենքի առջև հավասարության.

գ/ ժողովրդավարության.

դ/ հակակշիռների և հակազսպիչների.

ե/ համամարդկային արժեքների հարգման

զ/ ՈԻԽ թափանցիկ գործունեության իրականացման:

4.ՈԻԽ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 ՈԻԽ կազմի մեջ մտնում են ՈԻԽ բոլոր սովորողները, անկախ այն հանգամանքից, թե ՈԻԽ կառավարման որ մարմնի, հանձնաժողովի (բաժնի, ստորաբաժանման, օղակի) կազմի մեջ է մտնում (այսուհետ՝ ՈԻԽ անդամ)
4.2 Իր իրավասության սահմաններում պաշտպանել համալսարանի սովորողների իրավունքներն ու օրինական շահերը.
4.3 սովորողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով՝ համալսարանի համապատասխան կառավարման մարմիններին ներկայացնել համապատասխան հարցեր, առաջարկություններ, նկատառումներ, դիրքորոշումներ, եզրակացություններ և դիտողություններ.
4.4 մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսումնառության արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը.
4.5 սովորողներին իրազեկել իրենց իրավունքների և օրինական շահերի մասին.
4.6 մասնակցել համալսարանի ներսում կարգուկանոնի ամրապնդմանը.
4.7 կազմակերպել ինչպես ներբուհական, այնպես էլ՝ միջբուհական ուսանողական գիտաժողովներ, բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ, սիմպոզիումներ, մասնագիտական խաղ-մրցույթներ և այլ ուսանողական միջոցառումներ.
4.8 իր իրավասությանների իրականացման նպատակով անարգել և անհատույց օգտվել համալսարանի գույքից.
4.9 համագործակցել ինչպես ներպետական, այնպես էլ՝ միջազգային այլ խորհրդների, կազմակերպությունների և այլ ապաքաղաքական հասարակական միավորումների հետ.

5.ՈԻԽ ՆԻՍՏԵՐԸ

5.1 ՈԻԽ-ն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:
5.2 ՈԻԽ նիստերը վարում է ՈԻԽ նախագահը, կամ նրա հանձնարարությամբ ՈԻԽ նախագահի տեղակալներից մեկը:
5.3 ՈԻԽ նիստերը հրավիրվում են ուսումնական կիսամյակի ընթացքում ոչ պակաս քան՝ յուրաքանչյուր ամիսը երկու անգամ:
5.4 ՈԻԽ արտահերթ նիստեր կարող են հրավիրել հրատապ հարցերի և խնդիրների
լուծման համար ՈԻԽ նախագահի կամ ՈԻԽ անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ:

5.5 ՈԻԽ նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների 2/3-ը:

5.6 ՈԻԽ նիստերի անցկացման մասին ՈԻԽ անդամները տեղեկացվում են ՈԻԽ նիստից առնվազն 3 աշխատանքային օր առաջ (բացառությամբ հրատապ արտահերթ նիստերի):

5.7 ՈԻԽ նիստի օրակարգը և այլ փաստաթղթերը (այդպիսին լինելու դեպքում) ՈԻԽ անդամներին է տրամադրում նիստից առնվազն 3 ախտանքայի օր առաջ (բացառությամբ հրատապ արտահերթ նիստերի):

5.7 ՈԻԽ յուրաքանչյուր նիստ սկսվում է օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման մասին քարտուղարի զեկուցմամբ:

5.8 ՈԻԽ նիստի օրակարգում ընդգրկված հարցերը ներկայացնում է ՈԻԽ նիստը նախագահողը:

5.9 Օրակարգի հարցի քննարկման ընթացքում ՈԻԽ անդամների կողմից նոր առաջարկներ ներկայացնելու կամ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու անհրաժեշտություն առաջանալու դեպքում ՈԻԽ անդամների ձայների պարզ մեծամասնության համաձայնության դեպքում հարցը կարող է քննարկվել տվյալ նիստում, հակառակ դեպքում դրա քննարկումը տեղափոխվում է՝ հաջորդ նիստ:

5.10 ՈԻԽ նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հրավիրված անձինք, որոնք ՈԻԽ անդամներ (անդամ չէ) չեն հանդիսանում:

5.11 ՈԻԽ որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

5.12 Ձայների հավասարության դեպքում որոշիչ է՝ նախագահողի ձայնը, իսկ ՈԻԽ այն անդամը, որը համաձայն չէ ՈԻԽ ընդունած որոշման հետ, կարող է ներկայացնել գրավոր կարծիք, որը կցվում է ՈԻԽ նիստի արձանագրությանը:

5.13 ՈԻԽ նիստերը արձանագրվում են պարզ թղթային արձանագրման կամ համակարգչային եղանակով

5.15 ՈԻԽ նիստերը արձանագրում է ՈԻԽ քարտուղարը, որին նշանակում է ՈԻԽ նախագահը:

- Քարտուղարը՝

ա/ կազմակերպում է նիստերի ընթացակարգը.

բ/ կատարում է նիստի անդամների հաշվառում համաձայն սույն կանոնադրության.

գ/ կազմում է նիստերի օրակարգը և արձանագրությունները.

դ/ իրականացնում է ՈԻԽ գործավարությունը, նամակագրությունը և արխիվային գործը.

ե/ կազմակերպում է ՈԻԽ որոշումների, (կարգադրությունների) նախագծերի նախապատրաստման աշխատանքները.

գ/քարտուղարի բացակայության դեպքում նրա լիազորությունները ստանձնում է ՈԻԽ նախագահի տեղակալը:

6. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

6.1 ՈԻԽ-ն կազմված է՝

6.1.1 ՈԻԽ ընդհանուր ժողովից

6.1.2 ՈԻԽ նախագահից

6.1.3 ՈԻԽ նաղագահությունից

6.1.3 ՈԻԽ գործադիր մարմնից

6.1.4 ՈԻԽ ֆակուլտետային խորհուրդներից:

6.2 ՈԻԽ-ում կարող են ձևավորվել այլ բաժիններ, ժամանակավոր հանձնաժողովներ, կառուցվածքային ստորաբաժանումներ և այլ օղակներ:

7. Ընդհանուր ժողով

7.1 Ընդհանուր ժողովը Խորհրդի բարձրագույն ղեկավար մարմինն է.

7.2 Ընդհանուր ժողովին մասնակցում են ֆակուլտետային խորհուրդների ներկայացուցիչները .

7.3 Ընդհանուր ժողովի որոշումները ընդունվում են մասնակիցների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ.

7.4 Ընդհանուր Ժողովը գումարվում է տարին երկու անգամ.

7.5 Ընդհանուր ժողովի արտահերթ նիստ հրավիրվում է Խորհրդի նախագահի որոշմամբ կամ նախագահության անդամների 2/3-ի առաջարկությամբ:

7.6 Ընդհանուր ժողովը՝

ա/ ընդունում է նախագահության կողմից առաջադրված կանոնակարգը կամ կանոնակարգի փոփոխությունները.

բ/ հաստատում է նախագահության կողմից ներկայացված կիսամյակային աշխատանքային պլանը.

գ/ քննարկում է ընթացիկ և հեռանկարային հարցեր.

7.7 Ընդհանուր ժողովի ժամանակ ընտրվում են գործադիր մարմնի (հանձնաժողովների) նախագահները:

8. ՈԻԽ ՆԱԽԱԳԱՀԸ

8.1 ՈԻԽ նախագահը՝

8.1.1 իրականացնում է ՈԻԽ ընդհանուր ղեկավարում.

8.1.2 վարում է ՈԻԽ նիստերը.

8.1.3 ստորագրում է ՈԻԽ նիստերի արձանագրությունները.

8.1.4 իր բացակայության դեպքում հանձնարարում է ՈԻԽ նախագահի տեղակալներից մեկին վարել ՈԻԽ նիստերը.

8.1.5 համալսարանի ռեկտորին, համալսարանի կառավարման այլ մարմնին (մարմիններին), համալսարանի համապատասխան ստորաբաժանման պատասխանատուին (պատասխանատուներին) ներկայացնում է (գրավոր և /կամ/ բանավոր) առաջարկություններ, նկատառումներ, դիրքորոշումներ, դիտողություններ.

8.1.6 ՈԻԽ-ի իրավասության սահմաններում ընդունած որոշումները, ներկայացնում է համալսարանի համապատասխան պատասխանատուներին.

8.1.7 ներկայացնում է ՈԻԽ-ն այլ ՈԻԽ-ների, կազմակերպությունների, հաստատությունների հետ հարաբերություններում.

8.1.8 ՈԻԽ անդամներին իր իրավասության սահմաններում տալիս է հանձնարարություններ և պարտադիր կատարման ենթակա այլ հրահանգներ.

8.1.9 ՈԻԽ ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում իր կողմից ընդունած որոշումները.

8.1.10 նախաձեռնում է սովորողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը.

8.1.11 նշանակում է ընտրական-հաշվիչ հանձնաժողովի 2 անդամին:

8.1.12 նշանակում է իր փոխնախագահին և տեղակալին.

8.1.13 տնօրինում է ՈԻԽ ֆինանսական միջոցները.

8.1.14 ՈԻԽ ընդհանուր ժողովին և համալսարանի ռեկտորին է ներկայացնում հաշվետվություն ՈԻԽ-ում կատարված աշխատանքների և ֆինանսական միջոցների տնօրինման վերաբերյալ.

8.1.15 առանց լիազորագրի գործել ՈԻԽ անունից:

8.2 ՈԻԽ նախագահը ունի փոխնախագահ և տեղակալ:

9. ՈԻԽ նախագահությունը

9.1 ՈԻԽ նախագահության անդամ են համարվում ՈԻԽ նաղագահը,փոխնախագահը, նախագահի տեղակալը,քարտուղարը, ֆակուլտետային խորհուրդների նախագահները,հանձնաժողովների նախագահները.

9.2 ՈԻԽ փոխնախագահը (այսուհետ՝ փոխնախագահ) նշանակվում է նախագահի կողմից:

9.2.1 Փոխնախագահը հանդիսանում է գործադիր մարմնի (հանձնաժողովներ) ղեկավարը:

9.2.2 Փոխնախագահը պատասխանատու է հանձնաժողովների տարած աշխատանքների համար:

9.2.3 Փոխնախագահը կարող է պաշտոնանկ արվել ՈԻԽ նախագահի կողմից

9.3 ՈԻԽ նախագահի տեղակալին (այսուհետ՝ տեղակալ) նշանակում է ՈԻԽ նախագահը:
9.3.1 Տեղակալը հանդիսանում է ՈԻԽ նախագահի խորհրդականը:
9.3.2 նախագահի բացակայության դեպքում տեղակալը ստանձնում է նախագահի պարտականությունները եւ լիազորությունները:
9.3.3 ՈԻԽ նախագահի հրաժարականի դեպքում տեղակալը դառնում է ժամանակավոր ՈԻԽ նախագահի պաշտոնակատար, մինչ նոր ընտրություններ:
9.3.4 Տեղակալը կարող է պաշտոնանկ արվել ՈԻԽ նախագահի կողմից:
9.3.5 Տեղակալը համարվում է ՈԻԽ-ի սոց ցանցերում տարվող աշխատանքների պատասխանատուն:
9.3.6 Տեղակալը կորդինացնում է ֆակուլտետային խորհուրդների աշխատանքը:
9.4 ՈԻԽ քարտուղարին (այսուհետ՝ քարտուղար) նշանակում է ՈԻԽ նախագահը :
9.4.1 Քարտուղարը կազմակերպում է նիստերի ընթացակարգը:
9.4.2 Կատարում է խորհրդի անդամների հաշվառում համաձայն կանոնակարգի
9.4.3 Կազմում է խորհրդի նիստերի օրակարգը և արձանագրությունները:
9.4.4 Պահպանում է խորհրդի բոլոր մարմինների կազմված արձանագրությունները և որոշումները և ներկայացում ՈԻԽ ընդհանուր ժողովին:
9.4.5 Քարտուղարի բացակայության դեպքում նրա լիազորությունները ստանձնում է ուխ. տեղակալը:

10.ՈԻԽ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

10.1 ՈԻԽ գործադիր մարմնի կազմի մեջ են մտնում ՈԻԽ հանձնաժողովները:
10.2 ՈԻԽ գործադիր մարմնի ղեկավարը ի պաշտոնե հանդիսանում է ՈԻԽ-ի փոխնախագահը:
10.3 ՈԻԽ հանձնաժողովներն են՝

1.Կազմակերպչական
2.Մշակույթի
3.Սպորտի և ազատ ժամանցի

10.4 Հանձնաժողովների նախագահները ընտրվում են ՈԻԽ-ի անդամներից ինքնառաջադրման միջոցով ՈԻԽ-ի ժողովի ժամանակ և հաստատվում ՈԻԽ-ի փոխնախագահի կողմից:
10.5 Հանձնաժողովների նախագահները 7օրյա ժամկետում պարտավոր են նշանակել իրենց փոխնախգահին:
10.6 Հանձնաժողովների նախագահներին կարող է պաշտոնանկ անել ՈԻԽ փոխնախագահը :
10.7 Հանձնաժողովների նախագահի հրաժարական տալու դեպքում նախագահի ժամանակավոր պաշտոնակատար է դառնում ՈԻԽ փոխնախագահի որոշմամբ հանձնաժողովի որևէ անդամ, մինչ մյուս ՈԻԽ նիստը:

11.ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

11.1 Ֆակուլտետային խորհուրդը անմիջական ղեկավարում է ֆակուլտետի նախագահը,որը ընտրվում է ֆակուլտետի սովորողների կողմից փակ քվեարկությամբ :

11.2 Ֆակուլտետի խորհրդի նախագահի թեկնածու կարող է առաջադրվել սույն ֆակուլտետի առնվազն մեկ ուսումնական կիսամյակ սովորողը:

11.3 ֆակուլտետի խորհրդի կազմի մեջ մտնում են՝ ֆակուլտետի նախագահը,փոխնախագահը և կուրսի ավագները:

11.4 Ֆակուլտետի փոխնախագահին կարող է նշանակել և պաշտոնանկ անել ֆակուլտետային խորհուրդը:

11.5 Ֆակուլտետի նախագահի տեղակալին կարող է նշանակել և պաշտոնանկ անել ֆակուլտետային խորհրդի նախագահը:

11.6 Ֆակուլտետի նախագահի բացակայության Ֆակուլտետի նախագահի պարտականությունները և լիազորությունները ստանձնում է Ֆակուլտետի փոխնախագահը:

11.7 Ֆակուլտետի խորհուրդը նիստ է հրավիրում ամիսը առնվազն մեկ անգամ:

11.8 Ֆակուլտետի խորհրդի նախագահը կարող է պաշտոնանկ արվել ֆակուլտետի խոհրդի որոշմամբ:

11.9 Ֆակուլտետի խորհրդի նախագահի լիազորությունները դադարում են ավարտական կուրսի երկրորդ ուսումնական կիսամյակում:

11.10 Սովորողը վերը նշված կարգով կարող է ընդհանուր հիմունքներով մասնակցել ընտրություններին որպես թեկնածու, եթե շարունակում է համալսարանում կրթությունը:

12. ԿՈՒՐՍԻ ԱՎԱԳՆԵՐԸ

12.1 Կուրսի ավագները(այսուհետ՝ ավագ) ընտրվում են կուրսի բաց (ձեռք բարձրացնելու միջոցով) քվեարկությամբ:

12.2 Ավագը պատասխանատու է կուրսի ընդհանուր ակտիվության համար:

12.2 Ավագը համարվում է ֆակուլտետի խորհրդի նախագահության անդամ:

12.3 Ավագաը կարող է պաշտոնանկ արվել ֆակուլտետի նախագահության և ֆակուլտետի նախագահի որոշմամբ, որից հետո 7օրյա ժամկետում կուրսում նշանակվում են նոր ընտրություններ:

13. ՈՒԽ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԳՈՒՅՔԸ

13.1 ՈՒԽ ֆինանսական միջոցները գոյանում են համալսարանի հատկացումներից, նվիրատվությունից, նվիրաբերումներից և ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

13.2 ՈԻԽ զույքը համալսարանին սեփականության և այլ իրավունքներով պատկանող նյութատեխնիկական բազան է, որն անհրաժեշտ է ՈԻԽ գործունեությունն իրականացնելու համար:

14.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14.1Սույն կանոնադրությունը կարող է փոփոխվել ՈԻԽ անդամների առնվազն 1/3-ի և /կամ/ ՈԻԽ կառավարման մարմնի:

14.2 ՈւԽ-ն լուծարվում է ՀՀ օրենքների,համալսարանի կանոնադրությանն համաձայն,ինչպես նաև ՈւԽ-ի անդամների 2/3-ի որոշմամբ: